Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
մարտի 23-ի N 387-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ (ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ, ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ) ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ, ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են այլընտրանքային (հեղինակային, փորձաբարական և միջազգային) կրթական ծրագրերի փորձաքննության անցկացման, ճանաչման և հաստատման հետ կապված հարաբերությունները:

2. Այլընտրանքային ծրագիր է համարվում հանրակրթական ծրագրից ուսումնական պլանով, ուսուցման կազմակերպման ձևով և առարկայական ծրագրերով տարբերվող, հանրակրթական պետական չափորոշչի (այսուհետ՝ չափորոշիչ) վերջնարդյունքներն ու կարողունակություններն ապահովող և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես այլընտրանքային երաշխավորված հանրակրթական ծրագիրը:

3. Այլընտրանքային կրթական ծրագրերն են՝

1) հեղինակային կրթական ծրագիր, որը ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հեղինակած և օրենսդրությամբ սահմանված կարգով որպես հեղինակային երաշխավորված հանրակրթական ծրագիրն է.

2) փորձարարական կրթական ծրագիր, որը «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կրթական աստիճանի առավելագույն տևողությամբ ներդրված հանրակրթական ծրագիրն է.

3) միջազգային կրթական ծրագիր, որը միջազգային պայմանագրի հիման վրա կամ տասը և ավելի օտարերկրյա պետություններում իրականացվող հանրակրթական ծրագիրն է:

4. Այլընտրանքային կրթական ծրագիրը՝ որպես երաշխավորված հանրակրթական ծրագիր, ենթակա է գործածության սույն կարգի պահանջներին համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ պատվիրատու) կողմից փորձաքննության ներկայացնելուց, դրական եզրակացություն ստանալուց և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով հաստատվելուց հետո:

5. Փորձաքննությունն այլընտրանքային կրթական ծրագրերի ուսումնասիրության և սույն կարգի 2-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանության գնահատումն է:

6. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված ծրագրերի փորձաքննությունն իրականացնում է մանկավարժի որակավորում շնորհող բուհը՝ իր մասնագետների, մասնագիտական խմբերի, համապատասխան ստորաբաժանումների (ամբիոնների) մասնագետների և հանրակրթական, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի համակարգի գիտական, գիտահետազոտական կազմակերպությունների գիտաշխատողների ներգրավմամբ:

7. Փորձաքննության արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Փորձագիտական եզրակացությունն ընդգրկում է փորձաքննության ներկայացված այլընտրանքային կրթական ծրագրի ամբողջական վերլուծությունը սույն կարգի 2-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան, որը ներառում է փաստարկներ և հիմնավորումներ ծրագրային նյութի բովանդակությանը և կառուցվածքին ներկայացվող չափանիշներին և ցուցիչներին (գիտականություն, մատչելիություն և մանկավարժական, մեթոդական, լեզվաոճական և այլ բնութագրիչներ) համապատասխանության վերաբերյալ:

8. Հեղինակային կրթական ծրագիրը փորձաքննության է ներկայացվում օրենքով սահմանված կարգով որպես մտավոր սեփականություն գրանցվելուց հետո:

9. Փորձարարական կրթական ծրագիրը «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կրթական աստիճանի տևողությանը համապատասխան ժամանակահատվածում ճանաչվում է գործածության ենթակա՝

սույն կարգի 2-րդ կետի պահանջներին համապատասխան բովանդակություն ապահովելու և սույն կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան դրական եզրակացության առկայության դեպքում՝

1) պատվիրատուի տրամադրած փորձարարական կրթական ծրագիրը ներկայացվում է Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն (այսուհետ՝ ԿԶՆԱԿ)՝ փորձաքննության: 15-օրյա ժամկետում փորձաքննություն իրականացնելու արդյունքում կազմվում է փորձագիտական եզրակացություն: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով պատվիրատուին՝ նշելով երկարաձգման պատճառները: ԿԶՆԱԿ-ը կարող է պատվիրատուին դիմել և ստանալ լրացուցիչ նյութեր կամ պարզաբանումներ: Դրական եզրակացության հիման վրա ծրագիրը երաշխավորվում է գործածության.

2) փորձարարական կրթական ծրագրում ներառված հաստատությունների շրջանակը և սովորողների թիվը հաստատվում է նախարարի հրամանով.

3) փորձարարական կրթական ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր կրթական աստիճանի համար փորձարարական կրթական ծրագրով ընդունելություն կարող է իրականացվել միայն մեկ անգամ.

4) կրթական աստիճանի տևողությամբ փորձարարական կրթական ծրագրի իրականացման ժամանակահատվածում ԿԶՆԱԿ-ը յուրաքանչյուր տարի առնվազն երկու անգամ իրականացնում է մշտադիտարկում՝ ուսուցման կազմակերպման ձևի, բովանդակության, մեթոդաբանության, նպատակաուղղվածության վերաբերյալ.

5) ԿԶՆԱԿ-ը կրթական ծրագրի ներդրման սահմանված ժամկետի ավարտին ներկայացնում է ամփոփիչ եզրակացություն, որը դրական լինելու դեպքում կարող է սույն կետին համապատասխան որպես փորձարարական ծրագիր ներկայացվել երաշխավորման՝ ըստ կրթական աստիճանների.

6) ուսումնական յուրաքանչյուր տարվա ընթացքում պատվիրատուն ուսուցման կազմակերպման ձևի, բովանդակության, մեթոդների կիրառելիության արդյունավետության վերաբերյալ կարող է ներկայացնել առաջարկություններ, որոնք սույն կետի պահանջներին համապատասխան կարող են երաշխավորվել գործածության:

10. Միջազգային կրթական ծրագիրը ճանաչվում է գործածության ենթակա, եթե առկա է տասը և ավելի օտարերկրյա պետություններում որպես հանրակրթական ծրագիր իրականացվելու մասին հավաստի տեղեկություն կամ միջպետական նախնական համաձայնություն, ինչպես նաև առկա է սույն կարգի 4-րդ կետի պահանջներին համապատասխան դրական եզրակացություն:

11. Սույն կարգի 3-րդ կետով սահմանված այլընտրանքային կրթական ծրագրերը փորձաքննության են ներկայացվում պատվիրատուի կողմից:

12. Այլընտրանքային կրթական ծրագիրը (թղթային (ըստ անհրաժեշտության) և/կամ էլեկտրոնային տարբերակով) պատվիրատուից ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն), այն տրամադրում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված կառույցներին, որոնք 30-օրյա ժամկետում իրականացնում են փորձաքննություն և կազմում փորձագիտական եզրակացություն: Անհրաժեշտության դեպքում փորձաքննության ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով պատվիրատուին՝ նշելով երկարաձգման պատճառները: Փորձաքննություն իրականացնող կառույցները կարող են պատվիրատուին դիմել և ստանալ լրացուցիչ նյութեր կամ պարզաբանումներ:

13. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված ծրագրերի փորձագիտական եզրակացությունը նախարարությունը տրամադրում է պատվիրատուին՝ ներկայացված կարծիքի հիման վրա այլընտրանքային կրթական ծրագիրը լրամշակելու և նախարարություն ներկայացնելու համար: Նախարարությունը լրամշակված ծրագիրը տրամադրում է սույն կարգի 6-րդ կետով սահմանված կառույցներին, որոնք 10-օրյա ժամկետում իրականացնում են փորձաքննություն և կազմում փորձագիտական եզրակացություն:

14. Փորձագիտական դրական եզրակացության հիման վրա նախարարը 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված այլընտրանքային կրթական ծրագիրը հրամանով երաշխավորում է գործածության:

15. Բացասական եզրակացության դեպքում այն վերադարձվում է ներկայացնողին՝ կցելով եզրակացությունը և հիմնավորումները:

16. Փորձագիտական բացասական եզրակացության վերաբերյալ անհամաձայնությունների, դիտողությունների, առարկությունների դեպքում պատվիրատուն կարող է 30-օրյա ժամկետում դիմել նախարարություն՝ սույն կարգի պահանջներին համապատասխան կրկնակի փորձաքննություն իրականացնելու նպատակով:

17. Կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել դատական կարգով:

18. ԿՁՆԱԿ-ը յուրաքանչյուր տարի առնվազն մեկ անգամ իրականացնում է սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով սահմանված ծրագրերի մշտադիտարկում:

19. Չափորոշչի փոփոխության դեպքում սույն կարգով սահմանված կրթական ծրագրերը պետք է համապատասխանեցվեն փոփոխված չափորոշչին՝ «Հանրակրթության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6.3-րդ ենթակետով սահմանված պահանջն ապահովելու նպատակով, մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը՝ սույն կարգով նկարագրված ընթացակարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

23.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ